«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Դաստիարակ՝ Սրբուհի Մարտիրոսյան

Մանկապարտեզ՝ « Վայքի թիվ 3 » **ՀՈԱԿ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------2

Գլուխ 1. 1. Ենթագլուխ ----------4

Գլուխ 1. 2. Ենթագլուխ ----------6

Գլուխ 2. 1. Ենթագլուխ ----------8

Գլուխ 2. 2. Ենթագլուխ ----------12

Եզրակացություն ----------14

Գրականության ցանկ ----------16

Հավելված ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մի խումբ հոգեբանների կողմից նախադպրոցական տարիքը բնութագրվում է որպես մեզ շրջապատող աշխարհը հասկանալու մեծ չիրացված հնարավորություններ: Կրթական գործունեությունն օգնում է բացահայտել դրանք:

Մինչ օրս նախադպրոցական ուսումնական հաստատություններում նկատվում է դասաժամերի քանակի ավելացման միտում՝ ներառելով աշակերտներին ոչ միշտ օգտակար և անհրաժեշտ բովանդակությունը: Այս ամենը հանգեցրեց միջառարկայական կապերի ակտիվ որոնմանն ու դրանց օգտագործմանը տարբերակված ուսուցման և կրթության մեջ: Առաջացավ ինեգրված կրթության կիրառման հարցը: Նման կրթությունն իրականացնելու ձևերից մեկը թույլ է տալիս երեխաներին խնայել ժամանակ հաղորդակցության, զբոսանքի, ինքնուրույն ստեղծագործելու և խաղային գործունեության համար- դա ինտեգրված կրթությունն է:

Նախադպրոցական կրթության ինտեգրման խնդիրը կարևոր է և արդիական է թե՛ տեսության, թե՛ պրակտիկայի համար: Ինտեգրված կրթության արդիականությունը թելադրվում է նաև սոցիալական նոր պահանջներով:

Տվյալ նախագծային աշխատանքի **խնդիրն** է՝ բացահայտել կրթության համատեքստում ինտեգրված պարապմունքների դժվարություններն ու առանձնահատկությունները:

Նորույթը կայանում է նրանում, որ դասընթացների կազմակերպման կուտակված փորձը օգտագործվում է ուղղակի կրթական գործունեությու կազմակերպելիս՝ ստեղծագործաբար մշակված պահանջների տրամաբանության մեջ:

Հետազոտության **նպատակներն են.**

- կրթական գործընթացում ինտեգրված ուսուցման նշանակության ընդգծումը,
- միջառարկայական կապերի հիման վրա առարկայի ուսումնասիրումը,
- սեփական օրինակով ինտեգրված ուսուցման դրական կողմերի ընդգծումը:

Հետազոտության **մեթոդներն ու տեխնիկան**.

- համեմատական վերլուծություն, համեմատություն, որոնում,
- խնդրահարույց հարցեր, որոնք խթանում են ուսուցչի հետ համատեղ «բացահայտման» դրսևորումը՝ օգնելով երեխային գտնել պատասխանը:

- մի շարք խոսքի դիդակտիկ խաղեր՝ մշակութային և խոսքի չափանիշներին ծանոթանալու, բառապաշարն ակտիվացնելու, մայրենի լեզվի կողմերի բազմազանության ըմբռնումն ընդլայնելու և ինքնավստահության զգացում զարգացնելու համար:

Կրթական գործունեության ինտեգրված մոտեցումը համապատասխանում է նախադպրոցական դիդակտիկայի հիմնական պահանջներից մեկին. «կրթությունը պետք է լինի ծավալով փոքր, բայց տարողունակ»:[1]

Հետազոտության **մեթոդիկաներն** են՝ որոշել գիտելիքների ոլորտը, բացահայտել ինտեգրված կրթության նշանակությունը, դերն ու կարևորությունը դասապրոցեսին, վերլուծել տվյալ կրթության դրական ու բացասական կողմերը՝ հաշվի առնելով նախադպրոցական տարիքի երեխաների ծրագրային պահանջները և տարիքային առանձնահատկությունները և փորձել գտնել ինտեգրված ուսուցմանը նպաստող այլ ուղիներ, զարգացնող այլ ծրագրեր և միջոցներ:

Մեր հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնք իրենց հերթին բաղկացած են երկուական ենթագլխերից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Առաջին գլխի առաջին ենթակլում մենք փորձեցինք նկարագրել այժմյան կրթության հիմնախնդիրները, պահանջներն ու առանձնահատկությունները: Պարզաբանեցինք «ինտեգրացիա» բառի նշանակությունը և տվեցինք մանկավարժների ու հոգեբանների վերլուծությունները:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում շարունակում ենք քննարկել նախադպրոցական կրթության տեսության խնդիրները ինտեգրված պարապմունքների համատեքստում , փորձեցինք թվարկել ինտեգրված կրթության առավելությունները:

Երկրորդ գլխի առաջին ենթագլուխը ամբողջովին նկարագրում է հետազոտության ընթացքի մեկ օրինակ (բաց պարապմուք՝ իր մեթոդներով): Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացված են տվյալ մանկապարտեզի տնօրենի և մեթոդիստի գրավոր պատասխանները նշված բաց պարապմուքի վերաբերյալ:

Եզրակացության մեջ ամփոփում ենք մեր միտքը՝ տալով կարողունակահեն կրթական համակարգի համատեքստում ինտեգրված պարապմունքների դերը,նշանակությունն ու արդիականությունը:

Գրականության ցանկը ներառում է այն հեղինակների գրքերը, որոնցից օգտվել ենք հետազոտության ժամանակ: Հավելվածում անցկացրած բաց պարապմունքի նկարներն են:

[1] Рощупкина Н.А. Интеграция образовательных областей в образовательной деятельности с детьми в условиях реализации ФГОС/Молодой ученый.- 2017.-№46

ԳԼՈՒԽ 1.

1.ԵՆԹԱԳԼՈՒԽ

«Դաստիարակության ամբողջ խնդիրն է մարդուն ստիպել ոչ միայն լավ վարվել, այլև վայելել լավը. Ոչ միայն աշխատել, այլև սիրել աշխատանքը:» (Ջ. Ռեսկին)

Ինչպիսի՞ն է ներկայումս կրթությունը: Արդյո՞ք ներկայիս կրթական ծրագրերը ունեն կարիք բարեփոխումների, նոր մոտեցումների ու ձևաչափերի… Այս և նմանատիպ շատ հարցեր վաղուց արդեն շրջանառվում են կրթական ոլորտում գտնվող մարդկանց շրջանակներում: Ժամանակների հետ փոխվում է կրթության մեջ ամեն ինչ՝ հայացքները, մոտեցումները, նպատակներն ու վերջնարդյունքները: Եվ այդ փոփոխությունները վերաբերում են բոլոր կրթական շրջաններին՝ սկսած մսուր-մանկապարտեզից մինչև բուհական մակարդակ: Աստիճանաբար սկսեցին առաջանալ և լայնորեն կիրառվել կրթական ծրագրերի նոր մոդելներ: Դրանցից մեկը՝ դա ինտեգրված պարապմունքների կազմակերպումն է:

«Ինտեգրացիա» բառը առաջացել է լատիներենից և ունի մի քանի նշանակություն՝ համախմբել, ամփոփել, միացնել տարբեր տարրեր մեկ ընդհանուրի մեջ; համալրացնել,վերականգնել: Ինտեգրված կրթությունը կրթական գործընթացի կազմակերպում է, որտեղ ներգրավված են կրթական մի քանի մասեր և բնագավառներ:

Ներկայումս ինտեգրված կրթությունը «հանդիսանում է մանկավարժության կարևորագույն բնագավառներից մեկը, իսկ ինտեգրման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների, համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ»:[2]

Մանկապարտեզում երեխայի անհատականության բազմակողմանի զարգացումը ապահովում է հատուկ կազմակերպված ուսումնադաստիարակչական- կրթական գործընթացը, որի ընթացքում իրականացվում է երեխայի բարոյական, մտավոր, էսթետիկ և ֆիզիկական կրթությունը: Նման գործընթացին ավելի մեծ արդյունք է տալիս ինտեգրված ուսուցումը, որի ընթացքում երեխան կարող է զարգացնել իր

[2] Поддьякова Н.Н., Сохина Ф.А._ Умственное воспитание детей дошкольного возраста.-М.1984

կարողունակությունները՝ գործի դնելով հիշողությունը, արագությունը, ստեղծագործական միտքն ու տրամաբանությունը:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Յու. Կ. Բաբանսկու հետազոտությունները[3]: Նա առանձնացնում է ուսուցման մեթոդիկայի 3 հիմնական խմբեր.

- Երեխաների կրթական-ճանաչողական գործընթացի մոտիվացիա ու խթանում
- Ուսումնա-ճանաչողական գործընթացի կազմակերպում ու իրագործում
- Ուսումնա-ճանաչողական գործընթացի էֆեկտիվության վերահսկում ու ինքնավերահսկողություն:

Տվյալ մեթոդների խմբերը ունեն իրագործման տարբեր դրսևորումներ՝ ըստ ուսուցանվող երեխաների առանձնահատկությունների:

Առաջին խմբի մեթոդների մեջ գլխավոր նպատակներից մեկն է՝ ճանաչողական հետաքրքրություն առաջացնել նախադպրոցականների մոտ: Երկրորդ խմբի մեթոդների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում զգայական ընկալումը, մտածելու կարողությունը և երեխաների մոտ պրակտիկ գործունեության ձևավորումն ու ուշադրության կենտրոնացումը: Երրորդ խմբի մեթոդների մեջ կարևորվում է նախադպրոցականների մոտ ինքնավերահսկողության ու կարգապահության ձևավորումը: Նշված երեք մեթոդները իրար հետ փոխկապակցվում են ու լրացնում են միմյանց կրթական գործունեության ընթացքում:

«Մենք հաճախ ենք ականատես լինում մանկական մտածելակերպի կաշկանդվածության դրսևորումներին, պատրաստի սխեմաներով մտածելու ձգտմանը: Եվ դա ընտանիքի և մանկապարտեզի տված դաստիարակության արդյունքն է: Մենք՝ դաստիարակներս, ուսուցիչներս, մանկավարժներս, պետք է հստակորեն գիտակցենք մեր պարտականություններն ու փորձենք ամեն կերպ օգնել երեխաներին, պետք է նրանց սովորեցնենք բացել իրենց մտքի և հոգու թևերը»:[4] Դրա վառ օրինակ կարող է հանդիսանալ խաղերի կիրառումը դասապրոցեսին և խաղային դաստիարակությունը: Նման պարապմուքները արդյունավետ են, քանի որ երեխաների մոտ ձևավորում են բնության հանդեպ հետաքրքրություն, կյանքի և շրջապատի ու մարդկանց բարոյական նորմերի մասին ավելի լայն պատկերացումներ:

[3] Бабанский Ю.К. Избранные педагогические труды.-М.1989
[4] Начаева В.Г., Маркова Т.А._ Нравственное воспитание в детском саду.- М. 1984

ԳԼՈՒԽ 1.

2. ԵՆԹԱԳԼՈՒԽ

«Դաստիարակությունը, գլխավորապես, պետք է մեր սրտերում սերմանի անհատի և հասարակության համար օգտակար սովորույթներ» (Կ. Հելվեցիոս)

Նախադպրոցական կրթության տեսության և մեթոդների մեջ ինտեգրված ուսուցման գաղափարը արտացոլված է տարբեր տեսակի արվեստի և երեխաների գեղարվեստական գործունեության փոխազդեցությանը նվիրված ուսումնասիրություններում (Ն.Ա. Վետլուգինա, Տ.Ս. Կոմարովա, Ն.Ա. Կուրոչկինա, Օ.Ս. Ուշակովա և այլն):

Ն. Մ. Նազարովան ինտեգրված մոտեցման տեսանկյունից դիտարկում է մանկավարժական ինտեգրման տարբեր ասպեկտներ. նախադպրոցական կրթության բովանդակությունը՝ օգտագործելով տեսողական արվեստի փոխհարաբերությունների և կերպարվեստի, արվեստի այլ տեսակների և մեզ շրջապատող աշխարհի մասին պատկերացումների ծանոթացումը. «Շոշափվում են ինտեգրված ուսուցման առանձին տարրեր՝ խաղը որպես ինտեգրող գործոն, ինտեգրված դասերի նպատակների և խնդիրների տաքսոնոմիայի, ինտեգրման ուղղությունների և շատ այլ հարցեր»[5]:

Այսպիսով, նախադպրոցական տարիքի երեխաների ինտեգրված կրթությունն ունի որոշակի առավելություններ.

[5] Н. М. Назарова._ Понятие интеграции в специальной педагогике//Понятийный аппарат педагогики и образования.- Екатеринбург, 1998

- այն մեծացնում է մոտիվացիան, առաջացնում է ճանաչողական հետաքրքրություն,
- նպաստում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը,
- նպաստում է տեսողական և երաժշտական կարողությունների, հմտությունների և կարողությունների զարգացմանը.
- նպաստում է խոսքի զարգացմանը, օգնում է ավելի լավ հասկանալ բառի բառային իմաստը, նրա գեղագիտական էությունը.
- թույլ է տալիս համակարգել գիտելիքները.
- նպաստում է երեխաների գեղագիտական ընկալմանը, երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունն ու մտածողությունը (տրամաբանական, գեղարվեստական, ստեղծագործական) ավելի մեծ չափով զարգացնելուն:

Մեծահասակների և երեխաների փոխազդեցությունը մանկավարժական գործընթացի էական հատկանիշն է և հանդիսանում է նրա շարժիչը: Մանկավարժական փոխազդեցությունը ուսուցչի և ուսանողների միջև դիտավորյալ, երկարատև կամ ժամանակավոր շփում է, որի հետևանքը նրանց վարքի, գործունեության և հարաբերությունների միջև փոխադարձ կապեր են ստեղծվում: Մանկավարժական փոխգործակցությունը կարող է իրականացվել ուսուցչի և ուսանողների համատեղ գործունեության ձևաչափով: Համատեղ գործունեությունը կրթական գործընթացի երկու կամ ավելի մասնակիցների (մեծահասակների և սովորողների) գործունեությունն է՝ կրթական խնդիրները լուծելու համար նույն տարածքում և միաժամանակ: Այն առանձնանում է չափահասի գործընկերային դիրքի և գործունեության կազմակերպման գործընկեր ձևի առկայությամբ:

ԳԼՈՒԽ 2.

1. ԵՆԹԱԳԼՈՒԽ

«Մեզ անբավարար է թվում երեխաների մարմինը և հոգին թողնել այնպիսի վիճակում, ինչպես դրանք տրված են բնության կողմից. Մենք հոգում ենք նրանց դաստիարակության և ուսման մասին, որպեսզի լավը դառնա շատ ավելի լավ, իսկ վատը փոխվի և դառնա լավ»:

Լուկիանոս

Տվյալ հետազոտական աշխատանքի երկրորդ գլխի առաջին ենթագլխում մենք կփորձենք բաց պարապմունքի դասերից մեկի օրինակով հաստատել ինտեգրված պարապմունքների դերն ու կարևորությունը երեխաների դաստիարակության ու կրթության գործում:

Գեղարվեստական գրականություն

(Բաց պարապմունք)

Թեմա- Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները

Նպատակը-

- Դաստիարակել սեր և հետաքրքրություն գեղարվեստական գրականության և գրողների նկատմամբ,
- սովորեցնել ընկալել գեղարվեստական ստեղծագործության իմաստը
- հարստացնել երեխաների բառապաշարն ու զարգացնել մենախոսելու ու երկխոսելու կարողությունը:

Մեթոդները- մտագրոհ, խմբավորում, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, խորանարդում:

Պարապմունքը նվիրված է Հովհաննես Թումանյանի 150-ամյակին:

Երեխաները նստած են սեղանների շուրջ:

Դաստիարակը ողջունում է հյուրերին, իսկ երեխաները մաղթանքներ են նրանց հղում: Այնուհետև դաստիարակը երեխաներին մաղթում է ուշադիր և ակտիվ լինել և արտասանում է հայտնի տողերը՝ «Կա Մեծարենց,կա Տերյան և բազում այլ պոետներ կան, բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր ինքնության…»

Հարցին, թե կռահեցին արդյոք երեխաները, թե ում է նվիրված այս բաց պարապմունքը, երեխաներն անմիջապես պատասխանում են՝ Հովհաննես Թումանյանին:

Դաստիարակը հարցնում է, թե ով ինչ գիտի Թումանյանի մասին և ինչպես նրան կնկարագրի: Երեխաները հերթով պատասխաններ են տալիս՝ «ամենայն հայոց բանաստեղծ», «ամենահռչակավոր հայ», «բազմաժանր գրող», «հեքիաթների մեծ վարպետ», «անմահ լոռեցի» և այլն: Դաստիարակը երեխաներին տեղեկացնում է, Թումանյանը գրել է նաև երգեր: Այդ երգերից մեկը՝ «Կաքավիկը», որի երաժշտության հեղինակն է մեծն Կոմիտասը, երեխաները շատ են սիրում և լավ գիտեն: Հնչում է երգը և երեխաները երգում են «Կաքավիկը»:

Դաստիարակը հայտնում է երեխաներին , որ իրենք ունեն ևս մեկ հյուր: Ներս է մտնում հյուրը և երեխաներն անմիջապես կռահում են, թե ով է նա՝ Քաջ Նազարը, ով ձեռքին բռնել է մի արկղիկ: Քաջ Նազարն ասում է իր հայտնի խոսքերը՝ «Անհաղթ հերոս քաջն Նազար, որ մին զարկի ջարդի հազար…» Քաջ Նազարն ասում է, որ իր ձեռքի արկղը հասարակ չէ, այլ կախարդական: Դաստիարակն ավելացնում է, որ այնտեղ Թումանյանի հեքիաթների հերոսներն են թաքնված և երեխաները պետք է կռահեն նրանց անունները: Երեխաներից մեկը հանում է առաջին իրը՝ յուղ ու բրինձը, և անվանում է հեքիաթը՝ «Բարեկենդանը»: Երկու երեխա ներկայացնում են հեքիաթից մի փոքրիկ հատված.

Կարինե- «…Այ, որ ասում եմ հիմար ես, չես հավատում, էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել բերել, հորդ քելեխն ես տալի՞ս, թե՞ տղիդ հարսանիքն ես անում»…

Գուրգեն- «… Ի՞նչ քելեխ, ի՞նչ հարսանիք,ա՛յ կնիկ, տար պահի՝ Բարեկենդանի համար է…»

Մյուս երեխան դուրս է բերում արկղից մի սրածայր պոպոզ գլխարկ և անվանում հեքիաթը՝ «Կիկոսի մահը»: Մի քանի երեխաներ ներկայացնում են հեքիաթից հատված.

Էլինա, Նատալի, Աղրիանա- «Գնացի մարդի, ունեցա որդի, գդակը պոպոզ, անունը՝ Կիկոս, Վեր եղավ ծառին, ցած ընկավ քարին…Վա՛յ Կիկոս ջան, վա՛յ որդի ջան…»

Մեկ այլ երեխա արկղից հանում է շնիկ ու կատու, տալիս է հեքիաթի անունը՝ «Շունն ու կատուն», երկու երեխա ներկայացնում են հեքիաթից հատվածը.

Ֆելիքս- «…Բարի աջողում, ուստա Փիսո, գլուխս մրսեց, ի սեր Աստծո, առ էս մորթին ու ինձ համար մի գդակ կարիր գլխիս համար…»

Հ. Միլեն- «Աչքիս վրա, քեռի Քուչի, մի գդակա, հո մի քուրք չի, քո թանկագին խաթեր համար ուրբաթ օրը համեցեք՝ տար…»

Երեխաները հերթով դուրս են բերում տարբեր իրեր և անվանում հեքիաթները. ձուկ՝ «Խոսող ձուկը», աքաղաղ՝ «Անհաղթ աքլորը», կացին՝ «Կացին ախպերը» և այլն: Երբ արկղիկը դատարկվում է, դաստիարակը երեխաներին ասում է, որ Թումանյանը գրել է նաև տարվա եղանակներին ու ամիսներին վերաբերվող ոտանավորներ, ասում է, որ շուտով ձմեռ է և հարցնում է, թե ինչի՞ն են ամենաշատը ձմռանն սպասում երեխաները, որպիսի բակում խաղան: Երեխաները պատասխանում են՝ ձյանը, իսկ ինչպե՞ս է գալիս ձյունը՝ փաթիլ-փաթիլ: Երկու երեխա արտասանում են Թումանյանի «Առաջին ձյուն» ոտանավորը: Այնուհետը դաստիարակը հարցնում է, թե ո՞ր եղանակն է հաջորդում ձմռանը, քանի՞ ամիս ունի գարունը, որո՞նք են գարնան ամիսները: Երեխաներն անվանում են, որի հետո նրանցից մեկն արտասանում է մարտ ամսին նվիրված ոտոանավորը՝ «Ախ էսպես էլ գիժ ամիս…»

Դաստիարակը երեխաներին խնդրում է ևս մեկ անգամ վերհիշել Թումանյանի գրած հեքիաթները և նրանց հերոսների համար կառուցել կախարդական ամրոց: Դրա համար նրանք պետք է նախ ամրոցի պարիսպները կառուցեն: Պարիսպ կառուցելու համար դաստիարակը վերցնում է խորանարդիկը և հարցնում, թե ի՞նչ պատկեր է իր ձեռքում: Մի երեխայի օգնությամբ նա խորանարդը շարում է և շարունակում հարցերը. ինչպիսի՞ պատկեր է խորանարդը (երկրաչափական), ինչերի՞ց է այն բաղկացած (քառակուսիներից), իսկ քառակուսիների կողմերն իրար ի՞նչ են (հավասար): Երեխաները կարողանում են կառուցել կախարդական պարիսպը՝ ճիշտ պատասխանելով հարցերին:

Դասը շարունակվում է ֆիզկուլտ դադարով, որից հետո դաստիարակն ասում է հայ նշանավոր գրող, թարգմանիչ ու հրապարակախոս Զաբել Եսայանի խոսքերը՝ նվիրված Թումանյանին. «Հովհաննես Թումանյանը ճառագայթող մարդ էր, Բանասեղծ՝ ոչ միայն գրչով, այլև իր անձով, իր կյանքով և կենցաղով»: Այնուհետև նա գրքի միջազգային օրվա առթիվ երեխաներին է նվիրում Թումանյանի հեքիաթների գրքերը, որպեսզի երեխաները, երբ տառաճանաչ դառնան, անպայման ընթերցեն:

Պարապմունքն ավարտվում է կերպարվեստային աշխատանքով: Երեխաները ներկում են Թումանյանի՝ իրենց բաժին հասած հերոսների նկարները:

Դաստիարակը դասն ամփափում է Թումանյանի հայնի խոսքերով՝ «Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել «Մարդ» կոչման հետ»:

Թումանյանին նվիրված ինտեգրված բաց պարապմունքը հագեցած էր, ուսանելի ու հետաքրքիր: Երեխաներն ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին, դասի ընթացում աշխույժ էին ու կազմակերպած:

ԳԼՈՒԽ 2.

2.ԵՆԹԱԳԼՈՒԽ

«Սովորեցնելով ուրիշներին՝ սովորում ենք մենք ինքներս»

Սենեկա

«Դաստիարակչուհի Սրբուհի Մարտիրոսյանն անցկացրեց ուսանելի, գրագետ ու հետաքրքիր բաց դաս: Նա հասավ իր առջև դրված նպատակներին, քանի որ երեխաները գրեթե ճանաչում էին Թումանյանի ստեղծագործությունների որոշ մասին: Դաստիարակչուհին պարապմունքի միջոցով փորձեց բացահայտել երեխաների գեղարվեստաստեղծագործական ունակությունները, գեղագիտական զգացողությունը, երևակայությոնը՝ առարկաները դիտելու և հետազոտելու կարողությունը: Դաստիարակի նպատակներից էր նաև՝ հարստացնել երեխաների բառապաշարը, զարգացնել մենախոսելու և երկխոսելու կարողությունը, որին նա հասավ լիովին, քանի որ երեխաներն ազատ արտահայտում էին իրենց մտքերն ու երկխոսում: Պարապմունքը ընթանում էր ակտիվ, համագործակցության մթնոլորտում՝ փոխգործուն մեթոդների օգնությամբ:

Պարապմունքին երեխաներն աշխույժ էին: Յուրաքանչյուրը ցանկանում էր իր իմացածը ներկայացնել: Քանի որ պարապմունքը երեխայակենտրոն էր, նրանք փորձում էին ինքնուրույն մտածել և եզրահանգումներ կատարել:

Նախադպրոցական կրթության մեջ ինտեգրված պարապմունքների կազմակերպումը, առհասարակ, ինտեգրված կրթությունը խիստ կարևոր է, քանի որ նման դասերի շնորհիվ երեխան ավելի մեծ ուշադրությամբ և հետաքրքրությամբ է լսում, ինչպես նաև ընկալում է ավելի հեշտ ու արագ: Նման բաց դասեր կազմակերպելը շատ կարևոր է, քանի որ այդ դասերից երեխան ոչ միայն սովորում ,

այլև ծանոթանում է իր պատմությանը, մշակույթին, ինքնությանը, հասկանում է, թե որն է իր ծննդավայրը, որտեղից է սերում և ով է ինքը, ճանաչում է ինքն իրեն»:

Սույն պարտեզի տնօրեն՝ Մանե Գասպարյան

«Դաստիարակչուհին հասավ իր առջև դրված նպատակներին, խմբասենյակը զարդարված էր բազում դիդակտիկ, ցուցադրական և բախշիչ նյութերով, մի անկյունում Հովհաննես Թումանյանին վերաբերող իրերն էին, ամբողջ խմբասենյակում թումանյանական մթնոլորտ էր, մյուսում՝ տարբեր հեքիաթների վերաբերյալ քարտեր և ցուցադրական նյութեր: Ամբողջ խմբասենյակում թումանյանական մթնոլորտ էր: Աշխատանքը ուղղված էր երեխաների խոսքի զարգացմանը, որպեսզի ավելի կատարելագործվի երեխաների խոսքը, ինչպես նաև հետաքրքրություն առաջանա երեխաների մոտ գեղարվեստական գրականության և գրողների նկատմամբ: Դրանց շնորհիվ երեխաների մոտ զարգանում է մենախոսելու և երկխոսելու, հարցերին ճիշտ պատասխանելու կարողությունները, ինչպես նաև հարստացնում է բառապաշարը:

Երեխաներն իրենց զգում էին շատ լավ, բոլոր երեխաներն ընդգրկված էին պարապմունքում: Պարապմունքն սկսվեց ոտանավորով, այնուհետև դաստիարակ-երեխաներ հարց ու պատասխաններով, տարբեր հեքիաթներից կարճ-կարճ բեմականացումներով: Պարապմունքին երեխաները մասնակցեցեին ակտիվ, աշխույժ՝ ցույց տալով ստացած գիտելիքները:

Դաստիարակի կողմից հետազոտվող թեման շատ կարևոր է, որպեսզի երեխաները նախադպրոցական տարիքից ծանոթանան Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններին, հասկանան գրողի կատարած աշխատանքի կարևորությունը, որը շատ կարևոր է նախադպրոցական կրթության մեջ:

Վաղ տարիքից երեխաները պետք է ընկալեն գեղարվեստական ստեղծագործության իմաստը, դրանց բովանդակությունը հուզականորեն արտահայտելու կարողությունը: Պետք է զարգացնել երեխաների մոտ գեղարվեստախոսքային գործունեությունը, ձևավորել կատարողական ընդունակություններ յուրաքանչյուր կերպարին բնորոշ արտահայտչամիջոցներից օգտվելու կարողություն և այլ խնդիրների բացահայտում ու լուծում- այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է ունենալ մանկավարժական հմտություններ, կարողություններ և փորձ, որոնց լիովին համապատասխանում և տիրքպետում է դաստիարակչուհի Սրբուհի Մարտիրոսյանը:»

Սույն մանկապարտեզի մեթոդիստ Արմենուհի Ղազարյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դաստիարակությունը մեծ գործ է, նրանով է վճռվում մարդու ճակատագիրը»

Վ.Գ. Բելինսկի

Ինտեգրված կրթությունը- դա կրթություն է երեխաների համար՝ ուղղված երեխայի հաջողության ձևավորմանը և նրա անհատական կարողությունների զարգացմանը: Այն զարգացնում է աշակերտների ներուժը, խրախուսում է շրջակա իրականության ակտիվ իմացությունը: Նման կրթության ձևը ոչ ստանդարտ է և հետաքրքիր: Այն նաև ուսուցչի ստեղծագործական գործունեության հնարավորությունէ տալիս:

Ինտեգրված գործունեությունն այն գործունեությունն է, որը հավասար հիմունքներով միավորում է գիտելիքները տարբեր կրթական ոլորտներից՝ լրացնելով միմյանց և լուծելով մի շարք խնդիրներ:

Ինտեգրված պարապմունքներ կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ դասերի հատուկ գրաֆիկ ու կառուցվածք, դասանյութի պարզություն, ծրագրային բաժինների նյութի մտածվածություն և տրամաբանական փոխկապակցվածություն, ինտեֆրված օբյեկտների նյութի փոխկապակցվածություն գործունեության յուրաքանչյուր փուլում, նյութի համակարգված և մատչելի ներկայացում, գործունեության ժամկետների համապատասխանություն:

Ինտեգրված ուսուցումը ունի մեծ մանկավարժական հնարավորություններ.

- այն միավորում և ձևավորում է գիտելիքներ և հմտություններ,
- տալիս է հաղորդակցական հմտություններ,
- բարձրացնում է սովորելու նկատմամբ հետաքրքրությունը,
- թեթևացնում է վախը, լարվածությունն ու անորոշությունը:

Ինտեգրված պարապմունքների առավելություններն այն են, որ խթանում են սովորելու ցանկությունը, առաջացնում են ճանացողական հետաքրքրության ձևավորում, նպաստում են խոսքի զարգացմանը, համեմատելու, ընդհանրացնելու և եզրակացություններ անելու ունակությանը, սթրեսից ազատվելու ունակության ձևավորմանը: Այն ընդլայնում է ստեղծագործելու հնարավորություններ, հիմնված է փաստերի միջև նոր կապեր գտնելու վրա: Ինտեգրված պարապմունքները աչքի են ընկնում նյութի ընտրության բարդությամբ և ունեն գործունեության մանրամասն կառուցվածք: Այստեղ լուծվում են նաև ուսուցիչների անձնական համատեղելիության խնդիրները, միաժամանակ տալիս են երեխաների գիտելիքների և հմտությունների գնահատման ընդհանուր մոտեցում:

Այսպիսով, ինտեգրված պարապմունքների մեջ ամենակարևորը նպատակների միասնությունն է, որոնք որոշում են նախադպրոցական երեխայի

անհատականության ներդաշնակ զարգացումը: Ինտեգրացիան թե՛ երեխային, թե՛ ուսուցչին, մանկավարժին ինքնաիրացման և ինքնադրսևորման հնարավորություն է տալիս:

Հետազոտական աշխատանքի ընթացքում մենք հասանք այն նպատակներին, որ դրել էինք ներածության մեջ: Մենք կարողացանք ընդգծել ինտեգրված ուսուցման կարևորությունը և մեր անցկացրած բաց դասի օրինակով հաստատեցինք ինտեգրված դասընթացի խթանիչ գործունեությունն ու առավելությունը:

Կցանկանայի, որ դաստիարակներն իրենց հետագա աշխատանքների ընթացքում .

1. ուշադրություն դարձնեն ինտեգրված պարապմունքների կազմակերպման ու անցկացման վրա,
2. կատարեն դասի վերլուծություն, քանի որ առանց լավ վերլուծության չի կարող լինել զարգացում և ուսուցչի մասնագիտական կարողությունների բարելավում,
3. ուշադրություն դարձնեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և նրանց լիովին ընդգրկեն դասապրոցեսին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Гапеенкова С.М.-Развитие познавательных способностей младших школьников в процессе обучения.-Пенза,1997
2. Назарова Н.М.-Понятие интеграции в специальной педагогике//Понятийный аппарат педагогики и образования.-Екатеринбург,1998
3. Нечаева П.Г.,Маркова Т.А.-Нравственное воспитание в детском саду.-М.1984
4. Новикова Л.И.-Педагогика детского коллектива.-М.:Педагогика,1978
5. Поддьякова Н.Н., Сохина Ф.А._Умственное воспитание детей дошкольного возраста.М.,1984
6. Рощупкина Н.А.-Интеграция образовательных областей в образовательной деятельности с детьми в условиях реализации ФГОС/Молодой ученый.-2017.-№46
7. hy.everaoh.com/ինտեգրված դասընթացներ/
8. unicef.org/armenia/media/2516/file/3-6%20տարեկան%20երեխաների%20կրթական%20ծառայություններ ի%20կազմակերպումը%20այլընտրանքային%20մոդելներով.pdf

ՀԱՎԵԼՎԱԾ